« Կրթություն առանց սահմանի » ՀԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ «ՏՀՏ կիրառումը երաժշտության դասաժամերին>»

Կատարող՝ Նարինե Ղալեչյան

Դպրոց՝Երևանի, Ռուբեն Միրոյանի անվան թիվ77 հիմն. դպրոց

Առարկա՝ Երաժշտություն

Կազմակերպություն՝ Կրթություն առանց սահմանի

Խմբի պատասխանատու՝Էլլադա Հովհաննիսյան

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն.....3

ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

1.Ժամանակակից երաժշտական կրթության խնդիրները և նպատակները.....4

2.ՏՀՏ գործիքների կիրառումը որպես դասի ուսուցման արդյունավետ միջոց.....5

3.ՏՀՏ-ի կիրառումը դասի տարբեր էտապներում: 6

4.Դասապրոցեսների տարբերությունը ավանդական մեթոդների և ՏՀՏ-ի տեխնոլոգիաների կիրառման դեպքում.....7

5.Երաժշտության դասի ժամանակ կիրառվող ինտերակտիվ մեթոդներ 11

Եզրակացություն.....14

Օգտագործած գրականությա ցանկ.....15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթության արդիականացման ժամանակակից պայմաններում փոխվում են դպրոցների և ուսուցիչների նպատակներն ու

խնդիրները: Շեշտը տեղափոխվում է գիտելիքների ձեռքբերումից դեպի կաւողությունների ձևավորում:

Գործնականում դա արտահայտվում է հաղորդակցման հմտությունների, սոցիալական իրավիճակներում գուծելու կարողությունների և հմտությունների ձևավորման մեջ պատասխանատվություն ստանձնելու ունակության դեպքում , զարգացնում է թիմային աշխատանքի հմտություններն ու ինքնազարգացման կարողությունը:

Ներդրվում են մանկավարժական նորարական մոտեցումներ, որոնք հաշվի են առնում և զարգացնում սովորողների անհատական առանձնահատկությունները:

Ժամանակակից կրթական ծրագրերը կարող են դիտվել որպես կրթության որակի բարձրացման, աշակերտների ծանրաբեռնվածության նվազեցման, ուսումնական ժամանակի առավել արդյունավետ օգտագործման հիմնական պայման:

ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

1.Ժամանակակից երաժշտական կրթության խնդիրները և նպատակները

Խնդիրներ՝

- նոր կրթական տեխնոլոգիաների ներդրում,
- ինտեգրված ուսուցում հիմնված միջառարկայական կապի՝ արվեստի և տարբեր առարկաների փոխազդեցության վրա,
- երաժշտական կրթության ժամանակակից մեթոդների կիրառում,դարձնելով կրթական գործու-նեությունն ավելի տեսողական և ինտենսիվ,
- դիդակտիկ միջոցների կիրառման սկզբունքներ

Նպատակներ՝

- ✓ մշակել և ստեղծել նորարական տեխնոլոգիաների հայեցակարգը և մեթոդները,
- ✓ վերլուծել երաժշտության դասերին նորարական տեխնոլոգիաների կիրառման ներկա փորձը
- ✓ տեսականորեն հիմնավորված ներկայացնել երաժշտության դասերին ՏՀՏ –ի կիրառման անհրաժեշտությունը
- ✓ գտնել դասավանդման գործունեությունը զարգացնելու ուղիները ՀՀ ԿԳՄՍ պետական կրթական չափորոշիչների պահանջների իրականացման համար:

Ուսուցչի կրթական գործունեության մեջ ՏՀՏ-ի օգտագործումը հնարավորություն է տալիս միաժամանակ վերարտադրել տեղեկատվությունը հետևյալ տեսքով.՝տեքստ,գրաֆիկական պատկեր, ձայն, խոսք, տեսա-նյութ: Այս ամենը երեխաների

զարգացման համար ստեղծում է հիմնարար միջոցներ:Պրակտիկան ինձ ցույց է տվել, որ ՏՀՏ-ից օգտվելիս երեխաների հետաքրքրությունը դասերի նկատմամբ զգալիորեն մեծանում է, իսկ ճանաչողական կարողությունների մակարդակը՝բարձրանում:

Ուսուցչի գործունեության մեջ ՏՀՏ-ի կիրառման շնորհիվ հնարավոր է՝

- կրթությունը դարձնել ժամանակակից ,կրթական գործունեությունն ավելի մոտեցնել ժամանակակից երեխայի աշխարհայացքին, քանի որ նա ավելի շատ նայում և լսում է, քան կարդում և խոսում, նախընտրում է օգտագործել տեխնիկական միջոցների օգնությամբ ստացված տեղեկատվությունը,
- ժամանակ խնայել թե՛ ուսուցչի, թե՛ երեխայի համար, բարձրացնել ուսումնական գործունեության խտությունը, հարստացնել այն նոր բովանդակությամբ,
- օգնել ուսուցչին նյութը հուզական և պատկերավոր ներկայացնելու ունակության մեջ:

2.**ՏՀՏ գործիքների կիրառումը որպես դասի ուսուցման արդյունավետ միջոց**

ՏՀՏ-ի կիրառման դեպքում համակարգային մոտեցումը թույլ է տալիս լուծել մի շարք խնդիրներ՝

Կրթական՝

- բարձրացնել առաջադիմությունը
- ապահովել յուրաքանչյուր աշակերտի նկամամբ անհատական մոտեցում

Ուսուցողական՝

- զարգացնել երաժշտական հմտությունները
- զարգացնել կոմպյուտերային, տեխնիկական միջոցների հետ աշխատելու հմտությունները
- զարգացնել հանձնարարված աշխատանքի վերաբերյալ եզրահանգումներ անելու կարողությունները

Դաստիարակչական՝

- արժևորել գիտելիքի անհրաժեշտությունը և պահանջը
- ձևավորել ուսուցման գործընթացի նկատմամբ դրական վերաբերմունք
- դաստիարակել հայացքների և տեսակետների անձնային որակներ

3.ՏՀՏ-ի կիրառումը դասի տարբեր էտապներում

Աղյուսակ 1 [1]

Անցածի ստուգում, գնահատում	Նոր դասի ուսումնասիրություն	Գիտելիքի ամրապնդում, ամփոփում
Թեմայից աշակերտների իմացության ստուգում՝ Աշակերտերին նախապես հանձ-նարարվել է կազմել խաչբառ : Մեկ կամ մի քանի աշակերտ աշխատանքները ներկայացնում են էլեկտրոնային գրատախտակին՝	Նոր նյութի մատուցում էլեկտրոնային գրատախտակի կիրառմամբ՝ Աշխատանքը կատարվում է էլեկտրոնային տեսադասի ձևով և քննարկմամբ : Ուսուցիչը կիրառում է ուսուցման **փոխներգործուն**	Թեստային առաջադրանքների կատարում՝ Էլեկտրոնային գրատախտակի միջոցով սխալ պատասխանների բացահայտում և ուղղում, գնա-հատում:

[1] https://cyberleninka.ru/article/n/primenenie-informatsionno-kommunikativnyh-tehnologiy-kak-sposob-povysheniya-tvorcheskoy-aktivnosti-shkolnikov-na-urokah-muzyki/viewer

լուծվում է դասի ընթացքում այլ աշակերտների կողմից: Աշակերտների կողմից ինքնուրույն մշակած նյութի ներկայացում սահիկաշարի օգնությամբ: Անցած երգի կրկնություն խմբով , անհատական: Նվագակցության համար կիրառվում է էլեկտրո-նային դաշնամուր, աուդիո մեղեդային ֆոն ,կարաոկե MP 4 տարբերակները:	**մեթոդը** Աշակերտի կամ ուսուցչի ստեղծած սահիկաշարի դիտում և քննարկում:Այստեղ առավելու-թյունը կայանում է նրանում, որ ցանկացած պահի ուսուցիչը կարող է վերադառնալ նախորդ սլայդերին ՝ ամրապնդելու նոր միտքը, աշակերտների հետ քննարկելու և աշակերտների հարցերի դեպքում խնդիրը բացահայտելու:	

4.Դասապրոցեսների տարբերությունը ավանդական մեթոդների ՏՀՏ տեխնոլոգիաների կիրառման դեպքում

Ավանդական մեթոդներ	Նյութը մատուցվել է ՏՀՏ-ի կիրառմամբ
Նոր նյութի մատուցման ժամանակ կիրառվել են հետևյալ միջոցները	
Տեսական մասը ուսուցիչը մատուցում է աշակերտների հետ հարց ու պատասխանի միջոցով, գրատախտակի վրա կատարում գրառումներ: Դասի համար կան դիդակտիկ նյութեր, CD կամ MP4 ունկնդրման համար: : Ցուցադրվող նկարները անշարժ պատկերներ են, որոնք իրենց գույներով կամ պատկերներով այնքան էլ հետաքրքրություն չեն առաջացնում աշակերտների մոտ:	Մուլտիմեդիա սարքավորումներ (պրեզենտացիաների, սլայդերի, տեսահոլովակների, գրաֆիկական պատկերների տարրերի և տեխնիկայի ստեղծում և ցուցադրում): Ուսուցիչը համակարգիչն օգտագործում է որպես «էլեկտրոնային գրատախտակ»՝ պատրաստի էլեկտրոնային սլայդներ, վիդեո կամ շնորհանդեսներ ներկայացնելու

Այդ ամենը ներկայացնելու համար ուսուցչից պահանջվում է երակարատև նախապատրաստական մանրակրկիտ և հետազոտական աշխատանք :: Դասի **ակտիվ մաս** `գործնական աշխատանք(թեստեր՝թղթային տարբերակ ,ռեֆերատների ներկայացում ,խմբային և անհատական երգեցողություն, դերային խաղերգեր, աշխատանք տետրերում `նոտագրություն, կարևոր ձակերպումների գրանցում և այլն) գիտելիքների ստուգում և գնահատում:	համար: Օգտագործելով PowerPoint-ի հզորությունը՝ես մշակել եմ բազմաթիվ շնորհանդեսներ: Այս ծրագիրը թույլ է տալիս ամբողջությամբ հավաքել դասերի համար անհրաժեշտ բոլոր նյութերը, այնուհետև ցուցադրել դրանք ցանկալի հաջորդականությամբ էկրանին, այնտեղ կցել վիեո, աուդիո ֆայլեր ունկնրման կամ տեսադիտման համար: Google Forms -ի միջոցով գիտելիքների ստուգում և գնահատում ,հարցումներ, թեստեր, տվյալների հավաքագրում:
Ուսուցման ժամանակ նկատելի էր	

- Աշակերտները ակտիվ են դասի սկզբնամասում , ուսուցիչ-աշակերտ երկխոսության եվ գործնական աշխատանքների ընթացքում: - Կան երեխաներ, որոնք պասիվ են և ետ են մնում դասընկերներից կամ հետաքրքրված չեն մատուցվող նյութով: - Ուսուցչից պահանջվում է մեծ ջանքեր բոլոր աշակերտներին ուսումնական պրոցեսին ներգրավելու համար	- Մեծացել է երեխայի ստեղծագործական կարողությունը, բարձրացել է ճանաչողական կարողությունների մակարդակը , երեխաները դարձել են դասի ընթացքի մեծ մասնակիցը - Անհատական աշխատանքը համակարգչի հետ երեխային դարձրել է ինքնուրույն - Էկրանը ձգում է երեխային , նա կլանված է, հետաքրքրված է դասով: Ֆրոնտալ հարցման դեպքում հաճախ դա չի հաջողվում ուսուցչին: - Ուսուցիչը ժամանակ է խնայել նոր նյութը

	մատուցելիս և այն էլ ավելի բազմաբովանդակ է մատուցել - Ուսուցչի և աշակերտի միջև ստեղծվել է փոխըմբռնման և փոխօգնության հարաբերություններ - Մեծացել է դասի նկատմամբ աշակերտների հետաքրքրությունը :
Հետազոտական ուսումնասիրությունները հաստատեցին եղած կանխատեսումները	
- Մեթոդական մշակումների և փաստաթղթերի մշտական թարմացում և հավաքագրում (երկարաժամկետ պլաններ, նոտաներ, խաղեր, երաժշտական ընտրություն և այլն)	- Հնարավոր է դարձնել անցումը վիզուալից դեպի աբստրակտ մտածողությանը: - Ստեղծագործական խաղերի օգտագործումը լրացուցիչ մոտիվացիա է ստեղծում կրթական

- Անհրաժեշտ են կրթական գործունեության զարգացումներ, օրացուցային-թեմատիկ նոր և բազմաբովանդակ պլաններ - Ուսուցչից պահանջվում է մեծ քանակությամբ թղթային հաշվետվություն:	գործունեության ձևավորման մեջ.: - ՏՀՏ-ի կիրառումը օգնում է փոփոխել ուսուցչի և աշակերտի համատեղ գործունեությունը, հուզական առումով այն ավելի ինտենսիվ դարձնել : - Անգամ հիպերակտիվ երեխաները, որոնց ուշադրությունը բավականին դժվար է երկար պահել, մեծ հետաքրքրությամբ են ընդունում մեծ էկրանին ներկայացված տեղեկատվությունը: - Ուսուցիչը ազատվել է մեծ քանակությամբ ցուցադրական նյութեր հավաքելու գործընթացից,

	որին փոխարինել է համակարգիչը - Ուսուցչի համար ստեղծվել է դասավանդման մեթոդների առատ հնարավորություն : - Սահիկաշարերի ցուցադրումը ուսուցչին ազատել է բազմաթիվ նյութերի փաստահավաքագրումից, որտեղ կարևորը կարճ թեզերն են, հակիրճ լրատվությունը, տեսադիտումը, ունկնդրումը: - Փոխվել է ուսուցչի գործունեության ռիթմը՝ ապահովելով աշակերտների համար դրական հուզական ֆոն:[2]

[2] https://nsportal.ru/shkola/muzyka/library/2020/09/29/ispolzovanie-innovatsionnyh-tehnologiy-obucheniya-na-urokah-muzyki

Աղյուսակ 2

5.**Երաժշտության դասի ժամանակ կիրառվող ինտերակտիվ մեթոդներ**

Հիմնական մեթոդներն են՝

Պասիվ՝որի դեպքում ուսուցիչն է հանդիսանում ինֆորմացիայի գլխավոր և հիմնական կրողը, որը հաղորդում է աշակերտներին:



Ակտիվ՝որից ինֆորմացիայի հաղորդողը ուսուցիչն է, բայց այս անգամ աշակերտը պասիվ լսողի դերում չէ, այլ ակտիվ աշակերտ:



Ինտերակտիվ (փոխներգործուն)՝այստեղ ուսուցիչը ուղորդողի դերում է :Ինտերակտիվ մեթոդները կիրառվում են և՛ դասի և՛ գործնական պարապունքի, դաս-խաղի ժամանակ:[3]



[3] https://lib.armedu.am/article/3989

Աշակերտ

Ինտերակտիվ կրթությունը իր մեջ ներառում է բազմաթիվ տեխնիկական միջոցներ և պետք է նշեմ դրանց կիրառելիություն մի քանի ձևեր `

Քննարկում, բանավեճ՝թեմայի, հարցի խմբային քննարկում, լուծում, նոր հիմնավորումներ, որտեղ կարող են բախվել հակառակ տեսանկյուններ:

Նախագծեր `աշակերտը կամ մի քանի աշակերտ ընտրում են որևէ թեմա, կատարում հետազոտական որոնողական աշխատանքներ , ինքնուրույն մշակում այն և ներկայացնում այլ աշակերտներին:

Խաղեր՝(դերային,նմանակում ` իմիտացիա և այլն): Այս մեթոդի առավելությունը կայանում է նրանում, որ այն կարելի է կիրառել տարրական դասարաններից սկսած:

Պետք է նշել «**Շրջված դասարան**» մոդելի կարևորությունը և փուլերը՝

1 Ուսուցիչը ստեղծում է վիրտուալ կրթական միջավայր `

- ✓ տեսադաս,
- ✓ սահիկաշար,
- ✓ աշակերտների հետ հետադարձ կապի կրթական հեռավար հարթակի ընտրություն՝քանի որ ուսուցչի հետ անմիջական շփման բացակայությունը փոխարինվում է սոցիալական ցանցն

օգտագործելու հնարավորությամբ և էլեկտրոնային փոստով, կապ հաստատելով ուսուցիչը ընտրում է աշակերտների հետ հաղորդակցման ձևերն ու եղանակները:

2.Ուսումնական գործունեության կազմակերպում՝

- ✓ Ուսուցիչը որոշում է դասի հիմնական թեման և դասարանում աշակերտների հետ աշխատանքի ձևերը, սովորողների համար առաջադրանքների նախապատրաստումը:
- ✓ Մտածում աշխատանքի այնպիսի համակարգի մասին, որի դեպքում կարող է բավականաչափ ուշադրություն դարձնել յուրաքանչյուր աշակերտի : Պետք է կարևորել ուսուցչի կողմից մշակված հիմնական աշխատանքը դասարանի աշակերտների համար և հատկապես, եթե նրանք դա ինքնու-րույն կավարտեն:

3. Աշակերտների գիտելիքների վերջնական գնահատումը:

Այս բոլոր **ինտերակտիվ մեթոդները** լուծում են ուսումնառության կարևորագույն խնդիրները՝աշակերտներին սովորեցնել սովորել (սովորել սովորելու համար), զարգացնել քննադատական մտածողություն, վերլուծելու կարողություն, սովորել ինչպես ինքնուրույն գտնել տեղեկատվություն, ստեղծել տրամաբանական կապեր և կայացնել հիմնավորված որոշումներ:

Աշակերտը սովորում է **գիտելիք ձեռք բերել ինքնուրույն**: Նա հասկանում է, որ կարող է ինֆորմացիա ստանալ տարբեր տեղեկատվական մատչելի աղբյուրներից: Այդպիսով ձևավորվում է երեխայի անկա-խությունը, բարձրանում է բուն ուսումնական գործընթացի որակը, առաջընթացը և արդյունավետությունը, քանի որ աշակերտի մոտ արթնանում է հետաքրքրություն առարկայի նկատմամբ և հավատ սեփական կարողությունների նկատմամբ:

Աշակերտի մոտ զարգացնում են **սոցիալական հաղորդակցման հմտություններ**: Նա սովորում է առանց վեճի, կանոնները խախտելու արտահայտել սեփական կարծիքը, քննարկում անցկացնել, բանավիճել և ճիշտ պաշտպանել իր տեսակետը: Աշակերտը սովորում է հարգել այլ մարդկանց տեսակետները և ընդունել իր սխալը:

Ինտերակտիվ ուսուցման մեթոդը զարգացնում է նաև **ստեղծագործական հմտություններ և** հատուկ մտածելակերպ, քանի որ ուսուցիչը պետք է խրախուսի յուրաքանչյուր աշակերտի ակտիվ մասնակցությունը ուսումնական գործընթացին: Դաս- համերգների ժամանակ հանդիսատեսի արձագանքները նույնպես օգնում են հասնել դրան՝քանի որ երաժշտության դաս-համերգներին շատ կարևոր է երեխաների բեմական պահ-վածքը, երգերի կատարման

մշակույթը: Այդպիսի դասերին ցանկալի է կիրառվեն աշակերտների կողմից ստեղծած սահիկաշարերը (իմ պրակտիկայում աշակերտները սիրով և ոգևորությամբ են դա կատարում):

ՏՀՏ-ի կիրառումը օգնում է ազատվել աշակերտների նյարդային և մտավոր սթրեսի ավելացումից, թույլ է տալիս արագ փոխել աշխատանքի տարբեր ձևերը և ուշադրությունը , մի թեմայից մյուսին անցնել՝կանխելով ավելորդ հոգնածությունը: Թեման ներկայացվում է այնպիսի ձևով, որը ինքնուրույն հեշտու-թյամբ յուրացվում է: Իսկ ուսումնական գործընթացը կառուցվում է այնպես, որ ուսումնական թեման ընկալվի արագ և արդյունավետ:

ՏՀՏ-ի կիրառմամբ գիտելիքների ստուգում և գնահատում ,հարցումներ, թեստեր, կամ հավաքագրել տվյալներ կարող ենք կազմել Google Clasroom , Google Forms ի միջոցով, խաղային հարթակներ՝Guizizz, LearningApps-ի միջոցով: Իմ դասավանդման պրակտիկայում կիրառված աշխատանքներից են՝

https://forms.gle/CTpsgxGsktKVJQtQ8

https://docs.google.com/forms/d/e/1FAIpQLSeEFqm-MwtZYh8elnh2ixSi6mkzTJtC5JGKsBZ9kh8oBbmmHA/viewform

https://learningapps.org/display?v=ppnpriru520

https://learningapps.org/display?v=pu4iwppnj20

https://forms.gle/G53PCx8WkfPUFRXU7

Երաժշտության դասը կազմակերպելիս ինտերակտիվ ուսուցման գործիքները `

1. Տեսահոլովակների հաջորդականություն՝դրվագներ օպերաներից, բալետներից, մյուզիքլներից, երաժշտական ֆիլմերից, դասական և հանրաճանաչ երաժշտության համերգներից, կոմպոզիտորների կյանքի ու ստեղծագործության մասին պատմող գեղարվեստական և վավերագրական ֆիլմերից :
2. Անիմացիոն պատկերներ, որոնք խաղային ձևով աշակերտներին բացատրում են ուսումնական թեմայի հիմնական կետերը:
3. Տեսողական Կոմպոզիտորների դիմանկարներ,համաշխարհային դասականների, ժողովրդա-կան ,հոգևոր և ժամանակակից երաժշտության երաժիշտ-կատարողների և խմբերի նկարներ, թեմատիկ նկարներ(պատկերազարդումներ՝գեղանկարչության,

կիրառական արվեստի, քանդակագործության, գրաֆիկա), հուշահամալիրների և թանգարանների նյութեր և այլն:

4. Աուդիոտեքստեր, որոնք մեկնաբանում են երաժշտական մշակույթը, որոնք ուղղված են որոշակի դասի ծրագրի հիմնական հասկացությունների յուրացմանը:
5. Երաժշտական ստեղծագործությունների mp3(մինուս՝առանց ձայնի նվագակցություն) , կարաոկե տարբերակներ, որոնք աշակերտներին թվային տեխնոլոգիայի հետ աշխատելու հնարավորություն են տալիս:
6. Ստեղծագործական (ինտերակտիվ) առաջադրանքներ, թեստեր՝ուղղված ուսումնական նյութի ըմբռնմանը և աշակերտների երաժշտական գիտելիքների զարգացման հաջողությանը:

Այն բանից հետո, երբ դպրոցները համալրվեցին համակարգիչներով , սկսվեց պատրաստի էլեկտրոնային կրթական ռեսուրսների ակտիվ օգտագործումը ուսումնական գործընթացում: Դասագրքերի էջերում տեղադրված GR cod-երով ձայնային նյութերը հեշտացրել են երա-ժըշտական նյութերի որոնման գործընթացը, չնայած դասագրքերի փոփոխության դեպքում էլ պետք է ցանկը թարմացվի :

Իմ աշխատանքում ես օգտագործում եմ նաև ձայնասկավառակների հավաքածու՝բաղկացած տարբեր ոճերի և ժանրերի ստեղծագործություններից՝դասական,հանրամատչելի,ժողովրդական և հոգևոր: Համակարգչային տարբեր ծրագրերի շնորհիվ հնարավոր է դարձել երաժշտությունը ունկնդրել բարձրորակ ձայնով:Իսկ թվային ձայնը նույնպես ՏՀՏ միջոց է : Կոմպյուտորային նվագարկիչները հարմար են երաժշտական ստեղծագործությունների առանձին հատվածներ բազմաթիվ անգամ ունկնդրելու, գլխավոր մեղեդին (լեյտմոտիվը)մտապահելու և ինտոնա-ցիաները (հնչերանգները)վերլուծելու համար: Հնարավոր է նաև երաժշտությունը լսելիս փոխել տեսողական պատկերները : ՏՀՏ տեխնոլոգիաները կիրառում եմ բոլոր դասարաններում: Հատկապես տարրական դասարաններում երեխաներին շատ են հետաքրքրում վիրտուալ դասերը: Հեռահաղորդակցության(օնլայն) ուսուցման ժամանակ նույնպես ինտերնետային ռեսուրսների կիրառումը դասը դարձնում է նպատակային և կայացած, նպաստում է ուսուցման և դաստիա-րակության համակարգային և ակտիվ մոտեցման ներդրմանը:

Եզրակացություն

Պե՞տք է ՏՀՏ-ի կիրառումը« Երաժշտություն» առարկայի դասերին:Այո: Այն ուսուցչի և աշակերտի գործունեությունը դարձնում է արդյունավետ, դասը դարձնում գունեղ և տեսանելի, բարձրացնում է սովորո-ղի հետաքրքրությունը առարկայի հանդեպ:

Այսպիսով ՝ ՏՀՏ տեխնոլոգիաների կիրառումը երաժշտության դասերին դիդակտիկ ունիվերսալ միջոց է, որը օգնում է մեծացնել աշակերտների աշխարհայացքը, դարձնում ուսուցման պրոցեսը վառ,

հետաքրքիր և հիշվող: Ուսումնական պրոցեսը ուղղորդում է դեպի կոմֆորտ միջավայր՝ ընդգրկելով կրթական գործունեության բոլոր կողմերը:ՏՀՏ-ի շնորհիվ ուսուցիչը խնայում է ուսուցման ժամանակամիջոցի 30%-ը: Խնայելով ժամանակը , ուսուցիչը կարող է ավելացնել թեմայի խտությունը ՝ հարստացնելով այն նոր բովանդակությամբ:

Հետևաբար ՝աշխատանքը, որը օգտագործվել է ճանաչողական գիտելիքների ձեռք բերման համար , ՏՀՏ-ի շնորհիվ արդարացված է:

Այն դպրոցի շրջանավարտներին նախապատրաստում է զարգացող հասարակության կյանքի պայմաններին:

Տեղեկատվական նոր տեխնոլոգիաների կիրառման շնորհիվ դպրոցը իրացնում է կրթության համընդհանուր զարգացման սոցիալական պատվերը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ամիրջանյան . Յու.Ա, Սահակյան Ա.Ս. «Մանկավարժություն», Երևան, 2005 թ.

2. Հովսեփյան Վ.Ա., Գեղագիտական ուսմունքների պատմություն, Եր.,1979:

3. https://forum.armedu.am/forum

4.Программа Intel® Skills for Innovation (Навыки для инноваций) https://skillsforinnovation.intel.com/

5.https://nsportal.ru/shkola/muzyka/library/2020/09/29/ispolzovanie-innovatsionnyh-tehnologiy-obucheniya-na-urokah-muzyki

6.https://cyberleninka.ru/article/n/primenenie-informatsionno-kommunikativnyh-tehnologiy-kak-sposob-povysheniya-tvorcheskoy-aktivnosti-shkolnikov-na-urokah-muzyki/viewer